— «Մենք հիներս այդպէս ենք, մենք պէտք է օրինակ տանք նորերին»...

«Մենք հիներս»... Մի առանձին թովանք ունէր վերջին բառը նրա բերնում: Ինքն, արդարեւ, հիներից էր, թէեւ ընդամէնը 50 տարեկան: «Հին դաշնակցական» արտայայտութիւնը նրա աչքում հոմանիշ էր անձնուիրութեան, հաւատարմութեան, բարոյական անաղարտ մաքրութեան:

Եւ այդ առաքինութիւնների մարմնացումն էր մեր անբախտ Ցոնանը: Ազնիւ էր խօսքի մէջ, ազնիւ էր գործի մէջ, պարզ, անխարդախ, բարեհամբոյր եւ ընկերասէր: Խօսքը՝ միշտ բարձր ու վայելուչ, երբեք դռեհիկ:

Շարունակում է ցան ու ցրիւ հարցերի տարափը.

— Տեսնո՞ւմ ես, ինչպէս լաւ սարքել ենք խմբագրատունը քո մեկնելուց յետոյ...

Արդարեւ, մեծ փոփոխութիւն: Եղեքտրական լոյս սենեակների մէջ, Դաշնակցութեան դրադարանն ու արշիւները կարգաւորուած, Դաշնակցութեան պարտէզը մշակուած ու ծաղկազարդ, եւ սիրուն, կոկիկ ընթերցարանի մէջ շարունակում են հաւաքուել Ժընեւի հայ ուսանողները. շարունակում է իր պարբերական նիստերը «Ջանք» կոմիտէն եւ բոլորի վրայ տարածւում է մեր ալեւոր ու միշտ երիտասարդ ընկերոջ՝ «Տիար Անտոնի» հայրական շուքը...

Հաղը բռնում է, բայց հարցերը տեղում են անդադար. դալիս է, վերջապէս, եւ «սրտի հարցը», ծանր ու վիրաւոր...

— Անցար, անշուշտ, փոքրիկ թանգարանսենեակը եւ տեսար պատի վրայ կախուած Հօրթանսի մեծադիր նկարը... Ժընեւի հայ տիկնայք նուիրեցին ինձ, խնդրելով, որ կախուի թանգարանում... Անպատեհութիւն չկա՞յ արդեօք... Շուտով պիտի վերցնեմ ու տանեմ հետս...

— Ոչ մի անպատեհութիւն, սիրելի Ցոնան: Ես արդէն մտադիր եմ հաւաքել մեր եւրոպացի աչքի ընկնող բարեկամների նկարները եւ դեռեղել նոյն սենեակում, ուր դրուած են պատկերները Գլադստոնի, Պրեսսանսէի, Ժօռէսի, Բիյեառի, Բերարի եւայլն:

Ուզում եմ փոխել խօսակցութեան նիւթը, բայց տեսնում եմ հիւանդի մէջ բուռն ցանկութիւն՝ խօսելու նոյն ցաւոտ նիւթի մասին.

— Գիտե՞ս, Հօրթանսի մարմինն այրեցինք, եւ նշխարները՝ ամփոփուած փոքրիկ արկղի մէջ՝ մնում են այդտեղ... Շուտով, անշուշտ, ես էլ պիտի մեռնիմ... Մենք երկուսով ուիտ ենք արել, որ մեր նշխարներն ամփոփող երկու արկղները թաղուին Քանաքեռի բլրի վրայ, Մասիսի դիմաց...

Եւ աչքերը դարձեալ լցուեցան:

— Երկու փոքրիկ դամբարանի վրայ կը կանգնի մի պարզ քար, վրան արձանագրուած երկուսիս անունը...

. . . . . .

Մի ամբողջ շաբաթ խօսելուց ու մխիթարելուց յետոյ, հրաժեշտ տուի:

Եւ ահա վեց ամիս անցած՝ ստանում եմ մահուան բօթը: Ընդամէնը երկու շաբաթ առաջ զրկել էր ինձ իր վերջին երկտողը: Խընդրում էր մանրամասնօրէն գրել իրեն հայոց հարցի շուրջն եղած նոր ձեռնարկների մասին:

Կանթեղը սպառուեց ու մարեց միւսի պէս... Հայոց պատմութեան ամենածանր, ամենացաւոտ երկունքի միջոցին: Եւ մեր խեղճ Ցոնանը չտեսաւ գէթ ծայրը այն մեծ խորհրդաւոր պրոլոգոյսի, որ ինքը կոչել էր այնքան անձկութեամբ երեսուն տարուայ իր վաստակաւոր գոյութեան ընթացքում, թէ «Դրօշակ»ի յօդուածներում ու կուսակցութեան ժողովներում, թէ դպրոցական հանդէսների ու հրապարակային ճառերի մէջ...

Իմ դժբախտ ընկե՛ր: Արցունքով էր, որ ճամբու դրիր ինձ վերջին անգամ— եւ այժմ էլ արցունքով է, որ ես գրում եմ այս տողերը: Ընկերներդ չեն զլանայ կատարելու քո նուիրական կտակը: Ձեր երկուսիդ նշխարները կը թաղուին Քանաքեռի սրբազան բարձունքներում, Մասիսի քամիները կ՝օրօրեն ձեզ եւ հաղարաւոր աչակերտներդ ուիտի կ՝երթան ձեր շիրիմներին, յուսով ենք, ազատագրուած Հայաստանի մէջ: